ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2023 թվականի N 1089 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 943-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 18-ի «Ռադիոակտիվ աղտոտվածության օջախներում փրկարարական աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» N 943-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «ներքին գործերի» բառերով.

2) որոշման 2-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի 9-րդ ենթակետում և 5-րդ կետի 9-րդ ենթակետում «կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե» բառերը և

դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 3-րդ կետի 7-րդ ենթակետում և 5-րդ կետի 7-րդ ենթակետում «կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն» և «կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի» բառերը համապատասխանաբար փոխարինել «քաղաքաշինության կոմիտեն» և «քաղաքաշինության կոմիտեի» բառերով,

բ. 3-րդ կետի 10-րդ ենթակետից, 5-րդ կետի 10-րդ ենթակետից և 41-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը,

գ. 4-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ)» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ)» բառերով,

դ. 26-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ)» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ)» բառերով,

ե. 45-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«45. Ջուգահեռ ազդանշանները ճառագայթավտանգ օբյեկտի կարգավարի կողմից փոխանցվում է ՀՀ ՆԳՆ ՓԾ-ի մարզային (Երևանի) փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն: ՀՀ ՆԳՆ ՓԾ-ի մարզային (Երևանի) փրկարարական վարչության օպերատիվ հերթապահը կազմակերպում է մարզային (Երևանի) արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և տարահանման հանձնաժողովի անդամների ազդարարումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ